

ԱՆԻԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Զ.

Պայտից-սուր

Տաղտկալից աշունն էր սկսուել . . .

Թոել էին ծիծոնակները , դաշտերն ու լեռները գունատուել , երկինքը գորչ գոյն ստացել , որի վրայ միշտ սողում էին անվերջ , վհատեցուցիչ ամպեր . . . Բնութիւնը մեռնում էր . . . Մեռնում օրէցօք գարնանը կրկին արթնանալու , կրկին զուարթանալու յոյսով . այն ինչ մարդկանց սրաերին պատում էր մի տեսակ թախիծ , մի անսակ կոկիծ , որ անջնջնլի կերպիւ զրոշմում էր այնտեղ մի խոր ակօս . . . Մարդիկ զգում էին . որ մի ձմեռն էլ գլորում է յաւթսենականութեան գիրկը . որ նրանք մի տարով էլ մօտենում են դէպի անդառնալի կորուսաը . . .

Աշնանային ցուրտ քամին փշում էր Անիի դաշտավայրում եւ մաղում անձեւի կաթիլները : Անի քաղաքի մէջ այդ միջոցին զադարել էր շարժողութիւնը , դադարել էին մանուկների ճշիւնը , փողոցների աղմուկն ու ժխորը . Ամեն տեղ լուս էր եւ խաղաղ : Չորս կողմը աիրում էր արդէն խաւարը , տեղ տեղ միայն առկայծում էին լոյսի թոյլ ցոլմունքները :

Այդ միջոցին Անիի պարիսպներից դուրս , մի առանձնացած փոքրիկ խուղում վառ կերպիւ առկայծում էր կանթեղի լոյսը : Գեանափոր էր այդ խուղը , որի առաջ ընկած էին պայտելու փայտեր եւ մի քանի պայտելու գործիքներ : Այդ խուղը , որի մէջ բնակւում էր գարբին Ղեւոնդը եւ իւր աղջիկ Լուսիկը , գտնւում էր Անի քաղաքը աանող ճանապարհի վրայ . ուր արեւի ծագելուց մինչեւ մուաքը դարբին Ղեւոնդը պայտում էր անցորդ եղների եւ ձիերի ոտքերը . իսկ այնուհետեւ , մինչեւ խոր դիշեր , նա պայտեր էր կոռւմ եւ ապա թէ խոնջացած մարմնով քուն մտնում . մինչդեռ նրա աղջիկը հոգում էր տան պիտոյքները : Մի քանի տարի էր , ինչ վախճանուել էր գարբին Ղեւոնդի կինը եւ տան բոլոր հոգսերը ծանրացել էին Լուսիկի վերայ նա էր լուանում կատիքը . կարում , կարկառում հանգերձները , կթում իրենց ունեցած միակ կովը եւ իւղ ու պանիր պատրաստում :

Հանդիսա ու խաղաղ էր անցնում ծերունի դարբնի կեանքը եւ նա միշտ . գործը վերջացնելուց յետոյ , դիմում էր իւր սիրուն աղջկան ու ասում :

« Լուսիկ ջան , բեր աեսնենք ի՞նչ ես պատրաստել հօրդ համար » : իսկ Լուսիկը ժպիաը երեսին , վառվուն աշքերով , շաապով փում էր
Digitised by A.R.A.R. @

թախտի վրայ կապոյա սփոռցը ։ շարում այնտեղ բոքոնն ու լաւաշը ու թանէ տաք ապօռքը եւ ապա երկուսն էլ նոտելով կողք կողքի ։ ուտում էին Աստուծոյ տուած կերակուրը եւ ապա ճրագը հանդցնելով քնոյ հրեշտակը տարածում էր իւր հովանի թեւերը մինչեւ կնուրար լոյսի առաջին ցոլմունքները :

Սակայն այս գիշեր այգովս չէր դարբին Ղեւոնդի խուզը ։ Դարբին Ղեւոնդի գէմքը մոայլ էր ու խիստ ։ նա շապա շապա երկաթը կրակն էր կոխում ։ շիկացնում նրան եւ ապա զնդանի վրայ դնելով մուրենով ծեւծում նրան ։ կրկին կրակը կոխում ։ կրկին հանում եւ դարձեալ ծնծովմ ։ եւ զարմանալի բան ։ Մուրճի տակ երկաթը փոխանակ պայտի ձեւ ստանալու ։ երկար եւ ատփակ ձեւ էր ստանում ։ որ ամենեւին պայտի նմանութիւն չունէր ։ Այս գիշեր կարծես ինքն էլ չէր հասկանում թէ ինչ է շինում ։ Նկատելի էր միայն ։ որ նա խիստ վրգոված խիստ յուզուած էր եւ մտքերը կրծում էին նրա սիրան ու հոգին ։

Դործը վերջացնելու սովորական ժամն արդէն անցել էր բայց դարբին Ղեւոնդը տեղից չէր շարժւած ։ նա հնոցը աւելի էր ։ իկացնում եւ կարծես ամենեւին մտադրութիւն չունէր գործը ընդհանելու ։ այն ինչ կուսիկը ընթրիքը պատրաստել էր եւ հօր վեր կենալուն էր սպասում ։ Մի քանի անգամ նա մօտեցաւ հօրը եւ զարմացաւ նրա օտարութիւնից իւր հօր գէմքը առաջուայ նման հեզ եւ բարի չէր այժմ խրոխտ եւ սպառնալից էր ։ ի՞նչ բան արդեօք վրգովել էր իւր հօրը ։ ո՞վ արդեօք բարկացրել էր նրան — չզիաէր ։ բայց այս անզտմ երբ նկատեց ։ որ իւր հայրը փոխանակ պայտի ։ ուրիշ բան է շինում — սպասափեց ։

— Հայրիկ ։ սիրելի հայրիկ ։ կանչեց կուսիկը սրտատրով ։

Դարբինը չլսեց աղջկայ ձայնը ։ նա ուժգնութեամբ մուրճը զարկում էր սալին եւ շիկացած երկաթը փափկացնում ։

— Հայրիկ ։ միթէ ինձ չի՞ս լսում ։ եւ բաշեց նրա վեշը ։

Դարբինը գագարեցրեց մուրճ զարկելը ։ գէմքը չուռ առւեց գէպի իւր աղջիկը եւ մի քանի վայրկեան լուռ ։ անմիտ աչքերով կուսիկին նայեց ։ Կարծես այդ վայրկենին նա չէր ճանաչում իւր աղջկան ։ կարծես իւր սիրելի աղջիկը չլինէր առաջը կանգնած ։

— Հայրիկ ։ ի՞նչ է պատահել քեզ ։ սարսափած կանչեց կուսիկը ։

Դարբին Ղեւոնդը ցնցուեց ։ նա կարծես յետ մղեց իրենից մոայլ մտքերը եւ նրա գէմքը մի վայրկենում կրկին ստացաւ իւր սովորական արտայայտութիւնը ։ նրա գէմքը այժմ հեզ էր ու բարի եւ այդ հեզ ու բարի գէմքի վրայ փայլեց երանութեան մի ժպիտ ։

— Ի՞նչ է կուսիկ ։ իմ աննման աղջիկս ։ պատասխանեց դարբինը ։

— Դու հիւանդ չի՞մա հայրիկ ։ A.R.A.R. @

— Օ՞ . . . ո՞չ , աղջիկս , ես հիւանդ չեմ , թող Տէրը պահէ ինձ հիւանդութիւնից :

— Այդ ի՞նչ ես շինում , հայրիկ , զու ինձ վախեցնում ես :

— Հը՞մ , ի՞նչ եմ շինում , միթէ չե՞ս տեսնում , իմ աննման կուսիկ , թէ ինչ եմ շինում : Ի՞նչ էր շինում հայրդ մինչեւ հիմա :

— Պայտեր : Բայց դրանք պայտեր չեն , հայրիկ :

— Այո , պայտեր չեն , աղջիկս , սրեր են , սրե՞ր : Պայտերը սրերի փոխուցան : Այժմ հայրդ էլ պայտեր չէ շինում չորքոտանիներու ոտքերը պայտելու , այլ սրեր է շինում թշնամիների սիրաը միեւլու , ասաց դառն ժպիտով դարբին Ղեւոնդը եւ վերջին շիկացած երկաթն և տափակացնելով շպրտեց մի կողմը եւ մուրճը ցած դնելով՝ ասաց .

— Այսօր բաւական է : Այժմ պէտք է ընթթիք տնել եւ հանգստանալ :

— Դու ինձ սարսափեցնում ես , հայրիկ , այդ ի՞նչ սրեր են եւ ինչո՞ւ համար :

— Ամեն բան կիմանաս , գուսարս , համբերութիւն ունեցիր , միայն ցաւում եմ , որ մեր այսօրուայ հիւրը չեկաւ : Ես հորկաւոր լուրեր ունէի նրան հաղորդելու :

— Ո՞վ չեկաւ , հայրիկ :

— Գոհարիկը Միթէ՞ չգիտես , որ նա մեզ միշտ այցելում է : Երեւի այս գիշեր անձրեւը արգելք եղաւ , նրա դալուն :

Լուսիկը էլ ոչինչ չհարցրեց : Նրանք սեղան նստան եւ սկսեցին վայելել ընթթիքը : Անձրեւը կրկին մաղում էր եւ աշնանային քամին իւր նուազը ածում : Հենց այդ ժամանակ դրսից ունաձայներ լուսեցան եւ ապա , քիչ յետոյ , հետեւեալ խօսքերը՝

ինձ մի հարցնէք ո՞վ եմ ես

Սիրուն ու շին Անին եմ ես :

— Խենդն է , կանչեցին հայր ու գուսար եւ աշքերը դեպի դուռը ձգեցին :

Յիրաւի , մի քանի վայրկենից յետոյ խուզի դռներում երեւեցաւ մեզ ծանօթ խենթի աժդահայ կերպարանքը իւր մեծ փայտը ձեռքին :

— Ողջոյն բարեկամներիս , ասաց նա , փայտը մի կողմը դրեց եւ մօտեցաւ նրանց : — Ինչպէս երեւում է յաւ ժամանակ հասայ եւ արժանի կը լինեմ լուսիկի քնքոյց մատներով պատրաստած անուշ ապուրը ռւասելու :

— Համեցէք , համեցէք , մեր գլխի վերայ անդ ունես , ասաց դարբինը ուրախացած , տեղ տալով նրան :

Խենթը նստեց , փայտեայ գրդալով մի քանի ումպ ապուր խաշտեց եւ ապա յետ նստելով ասաց :

— Ո՞ւՓ , օրհնուես գու , լուսիկ , սիրաս հովացաւ :

— Տո սիրաը շատ շուտ է հովանում, խենթ, իսկ իմը . օ' . . .
Քո տուած լուրը ինձ այրում խորովում է, պատասխանեց Դեւոնդը :

— Է՛հ, վարպետ, այդ տեսակ փոթորիկներ շատ են եկել ու գնացել, այդ էլ կանցնի: Բայց ափսոս, որ այն մէկին բաց թողի և նա տարաւ իւր հետ սեւ Մարդու թուղթը: (Այդպէս էր անուանում խենթը Վեստ Մարդոին:)

— Հա, աարաւ, բայց ո՞վ գիտէ ինչ թուղթ էր:

— Սատանան նրա հետ, մեր Վահրամ իշխանը մեսած չէ, որ Վեստ Մարդիսը կարողանայ մի բան անել: Բայց ցաւում եմ որ Գոհարի սիրաը կը վրդովուի:

— Այսօր նա պիտի գար, չեկաւ: Դու յայտնեցի՞ր նրան եղելութիւնը, խենթ, հարցրեց դարբինը:

— Զէ, դեռ չեմ յայտնել: Վաղը, անշուշտ, ես ամեն բան կը յայտնեմ:

— Իսկ ի՞նչ են ասում նրա որդեգիրները:

— Օ' . . . նրանք օրէնում են Գոհարի կետանքը: Թող այդ տեսակ օրիորդների թիւը բիւրապատճիկը դաւնայ: Հարիւրաւ որ որբեր եւ աղքատներ օգտուում են նրա բարիքներից:

— Այդ մենք զիտենք, խենթ, բայց տեսնենք, ի՞նչ կասի օրիորդը Վեստ Մարդու վարմունքի մասին: Տեսնենք նա կրկին իւր բարութեամբ ուշադրութիւն չի դարձնի թէ՞ նշանակութիւն տալով կը զգուշանայ: Զէ՞ որ Վեստ Մարդիսը գործում է ուղղակի Վահրամի, իւր հօրէմ:

— Այդ թողնենք, վարպետ, խենթը խիստ յօգնած է, այսօր հարիւր տուն է շրջել եւ բաժանել օրիորդի տուած դրամները: Նա քնել է ուզում, ասաց խենթը եւ վեր կացաւ աեղից:

Լուսիկը սփոռոցը ժողովեց, իսկ խենթը մի երգ մրմուալով սկսեց քայլել խրճիթի մէջ, երբ նկատեց հնոցի մօտ թափած սրերը:

— Այս ի՞նչ ես շինում, վարպետ, ասաց նա գիմելով Դեւոնդին:

— Զէ՞ս տեսնում, — սրեր:

— Իսկ պայտե՞րը:

— Պայտերը էլ ձեռք չին տալիս: Այժմ սրեր են սկսուի մեր Վահրամին պաշտպանելու:

— Հա՞ . . . հա՞ . . . հա՞ . . . Ապրիս, վարպետ, երեւում է որ փորձուած մարդ ես: Վաղօրօք սրեր ես պատրաստում թշնամիների կուրծքը մխելու:

Անցաւ կարճ ժամանակ եւ խորին լոռութիւնը տիրեց այդ տեղ:

է.

Ուեւ մարդը

Երկու ձիաւոր Անի քաղաքից գուրու գալով , ճանապարհները բըռնեցին դէպի Սուրմառուի բերդը եւ դանդաղութեամբ առաջ էին գնում : Զիաւորներից մէկը Հայոց թաղաւորութեան խնամակալն էր՝ գոսոզ իշխան Վեստ Սարգիսը , իսկ միւսը Նրա հաւասարիմ ծառայ՝ Եղօն :

Մոայլ էր իշխանի դէմքը . մոայլ էր ծառայի դէմքը : Ո՞ւր էին գնում նրանք եւ ինչու երկուսն էլ տիսուր էին — յայտնի չէր : Սակայն երկուսի դէմքից էլ նկատելի էր . որ նրանց հոգին յուզւում է , որ նրանք վրդովուած են , անհանգիստ եւ որ մի ինչ որ տանջում է երկուսին էլ : Չէր խօսում տէրը , չէր խօսում ծառան : Նրանցից ամեն մէկը իւր մաքի հետ ընկած առաջ էին գնում . մինչեւ որ հասան մեզ ծանօթ դարբին Ղեւոնդի խուզի առաջ եւ կանդնեցրին ձիերը : Դարբին Ղեւոնդը նստած էր իւր գնդանի առաջ եւ մի ինչ որ երկաթի կտոր դրած սալին — մրճում էր : Նա չէր էլ նկատել թէ ինչպէս երկու ձիաւոր կանգնել էին առաջը եւ իրեն էին նայում :

— Եղօ , ցած իջիր , պէտք է ձիուս ուաքը պայտել , թէ չէ նա ինչ որ սկսում է կաղել :

Եղօն ցած թուաւ եւ բռնելով Վեստ Սարգսի ձիու սանձը , օգնեց իշխանին իջնելու :

Դարբին Ղեւոնդը դեռ ապշած նայում էր իշխանին . երբ Եղօն գուաց նրա վրայ :

— Է՞յ , տիմար , ի՞նչ ես ապուշի նման նայում , չե՞ս տեսնում , իշխանն է . պէտք է նրա ձին պայտել :

Դարբինը ակամայից զլուխ իջեցրեց իշխանին եւ ապա տեղ ցոյց տալով նրան նստելու : ինքը դործի սկսեց :

« Հը՞մ , լաւ բանի համար չէք լինի գնալիս , մոածեց Ղեւոնդը . ես ձիր ձիերը այնպէս պայտեմ , որ կէս ճանապարհին մնաք : »

Նա վերջացրեց դործը եւ ապա դառնալով իշխանին . ասաց :

— Պատրաստ է . Տէր :

— Լա՞ւ պայտեցիր , վարպետ :

— Հրաշալի , Տէր , ամբողջ տարի բաւական է , ասաց դառն ժպիտով Ղեւոնդը :

— Ապրիս , վարպետ , ասաց իշխանը եւ հեծնելով ձին , մի ոսկի շպրտեց վարպետին : Բայց Ղեւոնդը շտապով բարձրացնելով դրամը դիմեց իշխանին ասելով :

— Տէր , այս ոսկին ես չեմ կարող ընդունել :

— Ի՞նչու , վարպետ , ի՞նչու չես կարող ընդունել , զարմացած հարցրեց իշխանը ձիու սանձը քաշելով :

— Այս ոսկին , Տէր , այս ոսկին . . .

— Ի՞նչ այդ ոսկին :

— Մեր մեծ իշխանից դրամ չենք վերցնում , առաց Դեւոնդը եւ երեսը չուռ տուեց :

— Լաւ , ասաց Վեստ Սարդիսը եւ մարակեց ձիուն :

Նրանք ասած գնացին , այն ինչ Դեւոնդը երկար ժամանակ դեռ նայում էր նրանց ետեւից եւ ինքնի իրեն մրմռում :

— Որովհեանեւ քո ոսկու մէջ թոյն կայ . իշխան , թո՛յն , օձի թոյնից էլ զօրաւոր :

Դեւոնդը կրկին գործի սկսեց , այն ինչ իշխանն ու ծառան սլանում էին առաջ : Երբ նրանք բաւական առաջ գնացին , երբ նրանք շրջապատուեցան լուս գաշտերով : այն ժամանակ Վեստ Սարդիսը դանդաղեցրեց ձիու ընթացքը եւ մօս կանչեց ծառային :

— Եղօ՛ , ասաց նա , մօս տրի , մեր անելիքի մասին խօսենք : Գիտեմ զու հաւատարիմ ես ինձ . ուստի ես քեզանից գաղտնիք չեմ պահում : Այս բնութեան ծոցում մենք պատահ ենք եւ ոչ ոք չի կարող լրահետի մեզ :

— Հրամայիր , Տէր , ես պատրաստ եմ լսելու : Եղօն , իշխան , քո ստրուկն է ու կեանքը պատրաստ է քեզ համար զոհելու :

— Գիտեմ : Բայց լսիր . ինձ մտնրամաս մէկ էլ պատմիր թէ ո՞ւր է թագնուած պատահի Գագիկը , կամ ուելի լաւ է ասել , ո՞ւր են թագցցել նրան :

— Նա Անապատի վանքումն է ապաստանած , Տէր : Ես եւ Մարկոսը լաւ լրահեցինք նրա աեղը : Վահրամեանք ամեն կերպ աշխատում են գաղտնի պահել եւ նրա հետքը ծածկել , ուակայն նրանք չգիտեն , որ ասեղ չի թագնուի իմ աշքերից :

— Ապրիս , Եղօ , բայց ասու ինձ , ի՞նչ կեանք է վարում նա վանքում , միթէ՞ վանականների նման նա էլ աղօթիք է ապաւինած :

Եղօն ժպատաց :

— Ոչ , Տէր : վանականների մէջ նա ապրում է արքայի պէտ Հաւագին ունի ընամիր արքայական զգեստ եւ չնայած նրա 14 ամեայ հաստին , զէնք ու զրահի մէջ է կորած եւ երեք չի բաժանվում այդ զէնքերից :

— Ի՞նչպէս : Միթէ նա յոյս ունի արքայական գահը բարձրանալու , ասաց Վեստ Սարդիսը գառն ժողիտով եւ նրա աչքերում երեւացին վրէժինդրութեան մոլի կայծակիներ :

— Ինչպէս երեւում է , Տէր , նա պյու միտքն էլ ունի , որովհեանեւ գիշեր ցերեկ նա զինավարժութեամբ է անց կացնում :

— Կը տեսնինք , Եղօ , կը տեսնինք թէ նա ինչպէս կը ժառանդի այդ արքայական զահը , Միամի՞ս պատահի :

Այդ պատանին մեղ չունի , իշխան , գրան գրգռում են Վահրամ և անք , որպէս զի գրան թագաւորեցնելով իրենց գաղտնի նպատակներին հասնին : Նրանք չեն ուզում քեզ նման լաւ խնամակալ ունենալ , որովհետեւ դիտեն , որ դու նրանց պակասութիւնը երեսներովք կը տաս եւ չես թոյլ տայ , որ ազդը կործանուի գրանց խարդախութեամբ , պատասխանեց եղօն չողոքորթելով իւր աիրոջը , որին միտ դիւր էին դալիս այդ տեսակ խօսքեր :

Բայց այդ ծերունի ազուէսը չի հասնի իւր նպատակին : Եա կը տեսնի թէ ինչպէս կը ջախջախուեն իւր նպատակները , երբ իւր փայտայած Քադիկը այլ եւս չի լինի : Այն ժամանակ անսնենք ո՞ւմ կառաջարկի թափուր մնացած արքայական գանի վրայ :

Եղօն ապուշ կրթած նայեց իւր աիրոջ զէմքին : Այդ զէմքը զարհուրելի եւ գաժան էր , որից եղօն անդամ սոսկաց : Դժոխքը արտացուառում էր իշխանի աչքերում :

Նրանք մի փոքր լուռ առաջ անցան . երբ Վեստ Սարդիսը դիմելով եղօյին , խուլ գերեզմանական ձայնով ասաց :

— Եղօ՛ :

— Հրամայիր Տէ՛ր :

— Պէտք է մի ծանր գործ կատարես եւ հարթես իմ ճանապարը : Պատանի Քադիկին պէտք է ճանապարհոց հանել : Եա արգելք է ինձ :

Եղօն հասկացաւ աիրոջ միտքը եւ ցնցուեց :

— Ի՞նչպէս , հարցրեց նա նորից աիրոջ զէմքին նայելով :

— Ինչպէս , այդ քո գիտնալու բանն է : Բայց թէ պատանի Քադիկը այլ եւս գոյութիւն չպիտի ունենայ այս աշխարհում : Եա պիտի մեռնի :

— Իշխա՞ն . . .

— Ո՞չ մի բառ , ընդհատեց Վեստ Սարդիսը խրոխտ ձայնով : Նա պիտի մեռնի : Խոկ երբ կը կատարես այդ , այն ժամանակ մեծամեծ պարզեւների կարժանանաս : Ասա՞ , համաձա՞յն ես :

Տիրեց մի վայրկեան լուռթիւն Տէր եւ ծառայ իրար աչքերին էին նայում : Նրանք կարծես ուզում էին թափանցել իրար հոգու խորքը :

— Պատարաստ եմ կամքդ կատարելու , իշխան , վերջապէս ասաց եղօն :

Մի վայրկեան , եւ Վեստ Սարդիսի մռայլը անցաւ զէմքից : Անհուն ուրախութեան ժպիտը իմայլեց նրա զէմքի վրայ եւ նա մօտեցնելով իւր ձին եղօյին , զրկեց նրան , համբուրեց եւ պինդ ուեղմնելով ձեռքը ասաց :

— Աղրիս , Եղօ , զու արժանի ես իմ վատահութեան : Մենք մանրամասնութեան մասին յետոյ կը խօսենք :

Երկուսն էլ մտրակեցին ձիերին եւ առաջ սլացան :

Երեկոյ էր : Կրր հասան Սուրմառուի բերդը : ուր իշխանն ու ծառան փակուեցան առանձնասենեակում :

Բ.

Դաւադրութիւն

Խրամ գետը կատաղել էր : Պղտոր ալիքներով քշում տանում էր բար ու փայտ եւ կատաղած գազանի նման փրփուրը բերանին վազաւմ առաջ . . . Այդ Խրամ գետից մի փոքր վեր , Շամշուլդէ մերդից ո'չ հեռի , մի ժայռի գլխին փայլում էր ո . Անապատ վանքի կաթուղիկէն , Այդ վանքի միջից լաւում էր սաղմոսերգութեան տխուր միղեղին : Երեկոյեան պահուն էր : Արեւը արդէն թեքում էր դէպի իւր մուտքը , իսկ աշխարհային գձուծ գործերից հեռու փախած կրօնաւորները իրենց երեկոյեան աղօթքն էին մրմնջում : Քանից աւելի կրօնաւորներ ծունկ չոքած սեղանի առաջ աղօթում էին Աստծուն եւ փառարանում Նրան . . .

Սրբոց պատկերների առաջ վառվում էին կանթեղներ եւ անուշանոտ խնկի ծխով խնկարկուում նրանց : Մի տեսակ աստուածային , զեհանձն , երկիւղած տպաւորութիւն էր թողնում օտարի վրայ այդ վայրկեանը ո . Անապատի վանքը իւր աղօթող կրօնաւորներով : Ամեն ինչ , ինչ որ աշխարհային էր , մոռացեում էր այդ տեղ եւ մի տեսակ դիւթական զօրութեամբ լցնում մարդու հոգին :

Այդ կրօնաւորների հետ ահա ծունկ չոքած Աստուածամօր պատկերի առաջ , լուս աղօթում էր եւ մի տասնչորս ամեայ պատանի , որը ասրբերում էր կրօնաւորներից իւր մատաղ հասակով եւ զգեսաներով : Այդ պատանին կրօնաւորների նման սեւազգեսա չէր , այլ փայլուն արքայական զգեսաի հետ միասին նա զէնք ու զրահի մէջ էր կորած : Այդ զէնքերից նա աղօթելու ժամանակ անգամ չէր բաժանւում : Զնայած նորամատաղ հասակին , նրա բաց , ազգող հայեացքի տակ կարծես թագնուած լինէր մի խորին վիշտ , որը կարծես կրծում էր նրա սիրաը : Ի՞նչը արդեօք վշաացրել էր նրա մատաղ հոգին , ի՞նչու նրա սիրուն զէմքին դրօշմուած էր վշտի անողուրմ կնիքը , քանի որ այդ հասակում աշխարհային հոգները գոյութիւն չպիտի ունենան եւ նա միշտ պիտի ժպատա՛ , փայլի արեւի պայծառ ճառագայթների պէս : Կամ ի՞նչո՞ւ նա սեւազգեսաների մէջ է դանւում , միթէ՞ կեանքի գառն արկածները հենց կեանքի ասածին աստիճաններում սախզել է նրան թողնել սիրուն կեանքը եւ խսանեաց կրօնաւորների հետ միասին հանգերձեալ աշխարհի մասին մաածել . . . Յայտնի չէր : Միայն երեւում էր որ բոլոր կրօնաւորներն էլ երկիւղածութեամբ եւ պատկառանքով էին վերաբերուում դէպի այդ պատանին :

Ազօթքը վերջացրին : Կրօնաւորները քաշուեցին դէպի իրենց խռոցը , այն ինչ պատահին գուրա եկաւ եկեղեցուց և կանգնելով պարփակ-ների վրայ . մասյլ դէմքով ցած նայեց : — Նրա ուաքերի տակ . ս. Անապատի վանքից մի փոքր հետու , դոռում էր Խրամը և փրփրալով վազում առաջ :

Պատահին նայում էր գետին . նայում էր նրա փրփրած , կատաղած ալիքներին և նրա մատաղ սիրտը յուզուում էր : Նա աեսնում էր թէ ինչպէս զետր կատաղել էր եւ իւր կատաղութեանը զոհում էր ամեն ինչ . ե՛ւ թու փ , ե՛ւ ծառ , ե՛ւ քար : Առանց խնայելու նա ոչնչացնում էր իւր արգելքները , ճանապարհը հարթում եւ իւր ցանկացած ճանապարհով գնում . . . այն ինչ ինքը ի՞նչ էր անում . . .

— Օ՛ . . . դառն է ինձ ճամար այս կեանքը . ես ազատ , լայն առարկեց եմ ցանկանում ուր կարողանամ սրիս զօրութիւնը փորձել , այն ինչ ես , սաիպուած . ինչպէս մի կալանառոր , անց եմ կացնում օրերս այս սեւազգեսաների մէջ : Ի՞նչու . ի՞նչ պատճառաւ : Անօրէն Վեստ Սարգսի ձեռքից , որը ձեռքն առնելով թագաւորութեան զեկը , ուզում է ոչնչացնել Բագրատունեանց տոհմը եւ ինքը թագաւորել . . . Զէ . Գաղիկը , զահի իսկական ժառանգը գեռ կենդանի է . նա թէեւ փոքր է . բայց առեւծի սիրտ կայ նրա մէջ :

Գաղիկը , թուլասիրա Յովհաննէս-Սմբատ թագաւորի եղբօր որդին լսեց եւ յուզուած սրտով կրկին նայեց Խրամի պղտոր ջրերին : Այդ ժամանակ նրա միտոն եկաւ Անին իւր զիժ Ախուրեան գետով , իւր հազար ու . մի եկեղեցիներով , պալատներով ու շքեղ շինութիւններով : Նա յիշեց իւր տունը , յիշեց իւր հօրը՝ Աշոտին եւ իւր մօրը , որոնք պալատի շքեղ սենեակներում գուրզուրում եւ շոյում էին իրան եւ ալպազայ թագաւոր անուանում . . . Իսկ հիմա ո՞ւր են իւր ծնողները — չկան : Նրանք հանգան , չքացան երկրիս երեսից Հայաստանի զահը յանձնելով գայլերից մէկին . որը իւր փառասիրութեան ճամար պատրաստ է ամեն բան ունասակ տալ . ամեն իրաւունք ոչնչացնել . . .

Գաղիկը խորին մաքի մէջ ընկդմուած գեռ մասծում էր : Իւր պատահի , բայց խելոք խելքով զատողութիւններ էր տալիս , Հայաստանի ապագան գուշակում . այն ինչ մութը հետազնեաէ տարածւում էր չորս կողմը եւ ամեն ինչ ընկդմում խորին խաւարի մէջ : Յանկարծ Գաղիկը ցնցուեցաւ եւ ակամայից նա իւր ուշադրութիւնը դէպի մի թուփը գարձեց , որաեղ կարծես մի ինչ որ շարժուեց եւ ապա ամեն ինչ անշարժութեան մէջ մնաց : Գաղիկը նորից նայեց դէպի այդ թուփը եւ սոսկաց : Նա նկատեց , որ ճիւղերի միջից փայլում էին երկու արխւնալից աչքեր , որոնք ուղղուած էին դէպի ինքը եւ հեռուից անգամ կամենում էին կլանել իրան : Գաղիկը ակսմայից ձեռքը դէպի իւր սրի երախակալը

տարաւ, ապա շփեց իւր ճակատը եւ շոյելով գանգուր մազերը . ինքն իրեն խօսեց .

— Այս ի՞նչ էր, միթէ՞ երազի մէջ էի թէ յիրաւի արեանս ծառաւի մարդիկ պտտւում են շուրջս . . . բայց միթէ՞ նրանք չպիտեն որ Գագիկը քնած չէ :

Գագիկը նորից նայեց դէպի այն կողմը, բայց էլ ոչինչ չնկատեց : Չորս կողմը ամեն ինչ խաղաղ էր եւ լուռ եւ բացի նրամ գետի որոտաւութ էլ ոչինչ չէր լսուում :

Գագիկը շուռ եկաւ, եւ ուղղուեցաւ դէպի իւր բնակարանը : Նա ժպտաց, երբ մի քանի քայլ առաջ տեսաւ իւր հաւատարիմ Լեւոնին՝ Հարպիկ իշխանի երրորդ որդուն, որը ձեռքը սրի վրայ դրած հսկում էր իւր տիրոջը եւ ամեն քայլափոխում հետեւում նրան :

— Լեւոնիկ, գիտես ի՞նչ անայ, ասաց նա բռնելով նրա ձեռքը :

— Ի՞նչ, Տէր իմ :

— Ինձ թուաց, որ մեզ լրտեսում են այս տեղ, որ գայլերը մեր հուան առել են եւ վաղ թէ ուշ պիտի մտնեն այս տեղ եւ ո՞վ գիտէ ինչեր չանեն :

— Բայց Տէր, միթէ՞ նրանք չպիտեն, որ քեզ պահպանում է Հարպիկ իշխանի որդին, որ գիշերները մի աշխով քնում է իսկ միւսով հըսկում իւր տիրոջը : Զէ որ Վահրամ իշխանը քեզ ինձ է հաւատացել, Միամիտ մնա, Տէր, եւ հանդիսաւ քո բնակարանը մտիր, իսկ եթէ կը տեսնենք, որ նրանք մեր տեղը իմացել են, Հայաստանում տեղ շատ կը գտնուի, մինչեւ որ փոթորկից կանցնի :

— Այդ այդպէս է, Լեւոնիկ, սակայն այս գիշեր պէտք է զգոյշ մնալ : Գագիկի աշխերը սուր են եւ նրան չեն խարի : Թող թշնամին գայ եւ մեզ պատրաստ գտնի :

— Համբերիր, Տէր, ես այս բոպէիս կը թոշեմ խուզարկելու բոլոր թուփերը եւ վայ նրան, ով իմ սրիս բերանը ընկնի :

— Ո՛չ, Լեւոնիկ, ես հաւատում եմ, որ դու քաջ ես, սակայն մենք մեր թշնամուն չպիտի ցոյց տանք, որ մեզ յայտնի է նրա ներկայութիւնը : Հրամայիր վանքի գոները փակել եւ ինքդ արթուն կաց, մինչեւ անդամ չարժէ վանսականների խաղաղութիւնը վրդովել եւ յայտնել մեր կասկածը :

Գագիկը մտաւ իւր բնակարանը եւ ճրագի լուսաւորութեան տակ երկար ժամանակ խօսում էր ձերունի վանսականի հետ Հայաստանի երերուն գրութեան մասին, մինչեւ որ վանսահայրը հեռացաւ նրանից :

Գագիկը ոչ մի խօսք, ոչ մի քառ չասաց վանսահօրը իւր կասկածի մասին, այն ինչ իւր սրտից չէր հեռանում այն աշխերի արտայայտութիւնը, որոնք ուղղուած էին իւր վրայ :

Գագիկը չէր վախենում մահից, նա ամենին չէր էլ մտածում թէ

կարող են իրեն ուզանել, թէ նա թշնամիներ շտա պիտի ունենայ, քանի որ ինքն է միակ ժառանգը թափուր մնացած դահի, սակայն նա զգւում էր այն տեսակ մարդկանցից, որոնք դադանագողի լրտեսում են իրան, նա երկար ժամանակ շրջում էր ունեակում, մինչեւ որ քոնը կամաց կամաց յաղթեց նրան : Նա հանուեցաւ, պառկեց փափուկ անկողնի մէջ և աղա յառելով իւր միծ միծ աշխերը դէսի առաստաղը կրկին ուզեց քունը փախցնել իրանից, սակայն ֆիզիքական հանգստութիւնը իրենն էր ուզում : Մատաղ մարմնին հանդստութիւն էր պէտք, երիտասարդ հոգուն իւաղաղութիւն :

Հետզհետ Գաղիկի աչքերը ծանրացան եւ քնոյ հրեշտակը նրան իւր դիրկն առաւ : Նա քնից : Հանդիսա բարձրանում եւ ցածրանում էր նրա կուրծքը այն ինչ նրա մասազ դէմքի վրայ փայլում էր անհուն երանութեան ժայիսը : Ի՞նչ էր նա երազում այդ բոպէին — յայտնի չէր, սակայն նա ժայռում էր, մի ժպիտ, որը յատուկ էր միայն պատանի հասկին :

Վաղուց արդէն խոր զիշերը տարածուել եւ ամեն կողմը ոփոռուել էր խորին լուսեթիւն Գաղիկի հաւատարիմ լեւոնիկն էլ զէնք ու զրահի մէջ կորած թիւն էր առել Գաղիկի ննջարանի զռների առաջ, քարէ պատուանդանին եւ արթուն հսկում էր իւր տիրոջը : Նա չէր մոսացել Գաղիկի խօսքերը թէ « լեւոնիկ, պէտք է այս զիշեր արթուն մնալ, մեզ լրտեսում են . » եւ լեւոնիկը ամեն կերպ աշխատում էր արթուն մնալ, մի աշխով էլ չենել, թէ չէ ո՞վ զիտէ ինչ կարող էր պատահել Ծերունի Վահրամը Գաղիկի պաշտպանութիւնը միայն իրան հաւատաց : Նա լաւ յիշում է թէ ինչպէս Վահրամ իշխանը համրու բեց Գաղիկին, համրու բեց իրեն եւ առաց, « լեւոնիկ, Գաղիկին պահպանիր քո աշխի լոյսի պէս, զիշերը չորս աշխով զիտիր, ցերեկը երկու եւ վա՛յ քեզ եթէ նրա մազին զիպչող լինի : » Այդ խօսքերը յիշեց լեւոնիկը եւ ապա միաբը թուաւ, զնաց զէպի իւր հայրենի երկիրը, լեռնոս Պազին զաւասը, ուր լեռների ծերպերում բարձրանում են իրենց հայրենի բերդերը, ուր անմատչելի ծերպերում եւ ձորերում վազում էր ինքը որսի հսկուից եւ նիզակի մի հարուածով զետին գլորում որսը եւ ապա ուրախ ուրախ գառնում ամրոց եւ հպարտութեամբ ցոյց առաջին հօրը : Նա յիշում էր թէ ինչպէս իւր հայրը՝ ծերունի Հարէլը, ախորժակով ուտում էր որսի միսը եւ միշտ գոլում իրեն ու առում : « Ապրիս, լեւոնիկ, զու էլ քաջ ես ինչպէս եւ միւս եղբայրներդ բոլորդ էլ արժանի էք իմ որդիքս կոչուելու » : Վա՛հ, միթէ՝ ես քնում եմ, յանկարծ առաց լեւոնիկը եւ ցնցուեցաւ : Յիբաւի նա նկատեց, որ իւր աշխերը ծանրացել են, որ նրա քունը առանում էր որ նա չի կարողանում արթուն պահել իրան :

— Զէ, ոչ մի ժամանակ ես ինձ թոյլ չեմ տալ քնելու : Այս ի՞նչ յիմարութիւն է, չէ՞ ո՞ր ես խօսք եմ առել արթուն մնալ, այս ինչ
Digitised by A.R.A.R. @

փոքրոգութիւն է իմ կողմից, ասաց Լեւոնիկը եւ զուրս կալով սկսեց աջ ու ձախ նայել, ականջ գնել թէ չէ լսում արդեօք քայլերի ձայն, կամ չկա՞յ արդեօք կասկածելի մի բան Բայց Լեւոնիկը կասկածելի ոչինչ չնկատեց: Նրա ուշադրութիւնից վրիպեցաւ միայն այն, որ նա չնկատեց վանքի պատերի տակ ձգուած երկու մարդկային մարմին, որոնք արիւնածարաւ աչքերով իրեն էին նայում:

— Չէ՛, Գագիկը սխալուել է, կասկածաւոր ոչինչ չէ երեւում, ասաց Լեւոնիկը եւ կրկին ներս մտնելով, թիկն տուեց Գագիկի ննջաբանի առաջ:

Անցաւ մի փոքր ժամանակ: Լեւոնիկի մտքի մէջ կրկին հանդէս եկաւ իւր հօր ամրոցը, հայրենի խնճոյքն եւ ուրախութիւնը: Այս ինչպէս նա կը ցանկար թոչել այնահեղ, ինչպէս նա ուզում էր գոնէ մի վայրկեան լինել այն տեղ եւ քաշել իւր եղրօր որդու՝ չարաճճի Պողոսի ականջները, որ միշտ կանգնում էր իւր առաջ եւ նետը ձեռքին կանչում: «Հօրեղբայր, ի՞նչ կը նծայէիր ինձ ևթէ նետով ահա այս նշանին խփեմ»: — Մի համրոյր պատասխանում էի նրան . . . Եւ յիրաւի, այդ չարաճճին խփում էր նշանին եւ իւր վարդագոյն այսաերը դէմ առնելով առում: «Դէ՛ս, հօրեղբայր, նշանին խփեցի, համրութիր, միայն ինձ համար մի սուր դնիր. ես էլ եմ ուզում մէջքիս սուր կրել, ինչպէս պապու եւ զու կրում էք»: — Եւ Լեւոնիկը փայփայուելով այդ մտքերով չէր զգում, որ թէ եւ իւր աչքերը բաց են, բայց նրա միաքը հետզետէ քնում է, հետզետէ կորցնում իւր զգասառութիւնը եւ կոպերը կամաց կամաց ծանրանում:

— Ա՛խ, նոթե՛րս . . . նոթե՛րս . . . քանի ժամանակ է ես նրան չեմ տեսել, մասձեց զարձեալ Լեւոնիկը եւ նա չնկատեց էլ թէ ինչպէս այդ ժամանակ նրա աչքերը փակուեցան եւ մի վայրկեանում ամեն ինչ թուան նրա մտքից: Նրա ուզելը դադարեց գործելուց ու հանգիստ անվըրդով նինջը պատեղ նրան . . .

Լեւոնիկի ականջները չլսեցին անդամ թէ ինչպէս զրսից լսուեց զգուշաւոր բայլերի ձայներ, թէ ինչպէս իւր դուսը բաց եղաւ եւ մի մարդ սուրը հանած կանգնեց իւր զլիխին:

Մարդասպաննը կանգնած էր նրա զլխին եւ օրօրում էր սուրը: Նա մտածում էր սպանի՞ դորան թէ ոչ: Այդ չէր իւր նպաստակը: Լեւոնիկի կեանքը նրան պէսք չէր, նրան հարկաւ որ էր աւելի թանկագին կեանք: Նա պիտի վերջ դներ Գագիկի իշխանի կեանքին, որ ստանար Վեստ Սարգսից թանկ դնով ձեռք բերած ոսկիները: Եւ մարդասպանը վճռեց առաջ տրան սպանել, յետոյ միւսին: Սա արդելք էր նրա նոպատակին: Եւ մարդասպանը սուրը բարձրացրեց եւ ուզեց միսել Լեւոնիկի կուրծքը: Իրք մի անորոշ խուլ չունիչ լուս զրոխ: Մարդասպանը կանգ առաւ եւ դէպի դուռը նայեց ուր զանգազ, զգուշաւոր բայլերով ով որ մօտենում էր:

Այդ միջոցին Լեւոնիկը աշխերը բաց արաւ և տեսաւ մարդառապահին մերկ սուրը ձեռքին : Մի վայրկեան և Լեւոնիկը վեր թռաւ աեղից եւ սկսուեց երկուսի մէջ կոխը :

— է՛, հէ՛յ, լաւ ժամանակ գտար, Լեւոնիկին գոռաց նա, անձնատուր եղիր թէ չէ մաս մաս կը կտրատեմ :

Մարդառապահը սրի հարուածով վիրաւորեց Լեւոնիկի ուսը : Լեւոնիկը ցաւից կսկծաց, բայց աւելի կատաղեց, երբ տեսաւ որ զուոր բացուելով մի ուրիշ չարագործ ներս մտաւ, եւ յարձակուեց իւր վրայ :

— Ա՛ . . . անիծուածներ, զուք երկուսն էք թէ էլի՞ կաք: Միթէ՞ զուք չգիտէք, որ Լեւոնիկին տասն էլ հերիք չէ :

Կոխը երկար չտեսեց: Չարագործներից մէկը շուտով վայր ընկաւ, իսկ միւսը տեսնելով այդ, խոյս առւեց եւ շուտով անյայտացաւ :

Այդ միջոցին պատասի Փագիկը վեր կացաւ եւ տեսնելով վիրաւոր չարագործին, գլուխը շարժեց: Չարագործը հեծում էր մահուան տագնապի մէջ :

Աղմուկը ընկաւ վանքի մէջ եւ շուտով ամեն կողմը ճրագներ վառուեցան: Նրանք ամեն կողմը փնտուցին միւս չարագործին բռնելու: սակայն նրա հետքն էլ չգտան: Ո՞րտեղից էին այդ մարդառապահները ներս եկել եւ ո՞րտեղից փախուսա առւեց նրանցից մէկը: այդ անյայտ մնաց: Սակայն երբ նայեցին վիրաւորուածի դէմքին — սոսկացին: — Դա վանքի ծառաներից մէկն էր — Մարկոսը:

— Դաւաճա՞ն, այդ ում էիր ուզում սպանել, կանչեց վանահայրը բարկութիւնից թողացող շրթունքներով:

— Ների՞ր . . . վանահայր, ես մեղ շունեմ . . . եղօն . . . խօսքը կիսատ մնաց վիրաւորի բերանում եւ նա շունչը փչեց:

— Նա կաշառուած էր եղօյից, բայց թէ ո՞վ է այդ եղօն ահա գաղանիքը, ասաց Լեւոնիկը եւ սառնասրառութեամբ իւր վէրքը բացեց կապելու . . .

թ.

Ցուսահատ սիրտը

Լուսիկի մատաղ կեանքը ծազկում էր եւ ուրախ թոշնիկի նման թրթռում: Դեռափթիթ վարդի նման նա օր աւուր բացւում էր ու գեղեցկանում: Գարնանային արեւի անդրանիկ ճառագայթները նոր սփոել էին աշխարհիս վրայ, երբ Լուսիկը ստքի վրայ էր: Նա նոր իւր կովն էր կթել եւ գէպի դաշտ թողել, իսկ ինքը բոկուն մաել իւր փոքրիկ պարտէցը, ուր նարգիզն ու շուշանը, սեհանն ու սուսամբարը բուրում էին անուշահոտութեամբ: Նա նայում էր ամեն մի մարդ. ամեն մի ծազ-

կից առանձին հոտոտում եւ ապա ջրում իւր ծաղիկները . . . Լուսիկը սիրում էր իւր փոքրիկ պարտէզը, որը իւր ձեռատունին էր եւ ուր ազատ ժամերը անց էր կացնում իւր ծաղիկների եւ վարդերի հետ զրոյց անելով : Այդ վարդերի թուփերի վրայ ամեն առաւտ նոտում էր բլբուլը երգում էր . . . նրա ձայնը խիստ դուրալի , խիստ քննոյլ էր , որ շարժում էր լուսիկի սրտի ամենանուրը թելերը եւ նրան լացացնելու չափ յուղում . . . Ո՞հ , բլբուլը սէր էր երգում, սէ՛ր մասաղ կեանքին, սէր նոր բացուող վարդի կոկոնին : Լուսիկի սիրուն էլ կարօտ էր այդ սիրոյն , կարօտ իւր զիժ Ստեփանիկի սիրուն դէմքին , բայց ահա ամիսները գլորուում էին իրար ետեւից , սակայն նա չկար ու չկար : . . . Ա՞խ , թոփ'ր , բլբուլ , թոփ'ր , հեռացիր իմ ձեռատունի վարդերից . քո երգը քաղցր է քան մեղք եւ թիւնալից քան օձի թոյնը : Դու ե՛ւ կրակ ես թափում սրտիս մէջ ու այրում նրան , ե՛ւ թոյն ես թափում սպանում ինձ , ե՛ւ մեղեղիներ երգում, որոնք քաղցր են քան նոյն ինքն երջաճ կութիւնը . . . Ա՞խ , քո երգերից խարուած մոռանում եմ ամեն ինչ եւ նրա գրկում կարծում բայց սոււտ է ամեն ինչ , դատարկ ցնորք , սնոտի երա՛զ : Ստեփանիկը ինձ խարեց եւ նա էլ չի վերադառնայ : . . .

Այդպէս մասնում էր լուսիկը եւ ամեն օր բլբուլի երգը լսելուց յետոյ ջրում իւր պարտէզը , ծաղիկներից մի փունջ կազմում եւ իւր խուզը զարդարում , ապա դիմելով հօրը շարունակ հարցնում :

— Հայրիկ , Հարպիկ իշխանից լուր չունի՞ս , երբ պիտի գայ Ստեփանիկը :

— Ի՞նչ է աղջիկո , ի՞նչու թառամում են այսերդ եւ խաւարում աչքերդ , չէ՞ որ զիժ Ստեփանիկը խօսք առւաւ վերադառնալու . ի՞նչու գու համբերութիւն չունիս :

— Ա՞խ , հայրիկ , օրերն անցնում են , բայց ոչ Հարպիկ իշխանն է երեւում եւ ո՛չ Ստեփանիկը , իսկ ես մաշւում եմ . . .

— Համբերութիւնը լաւ բան է , լուսիկ . չէ՞ որ ես ինքս օրէննեցի երկուսիդ նշանաղբաթիւնը եւ ինքը Հարպիկ իշխանը խոստացաւ խաչդրոնելու : Միթէ՞ Հարպիկ իշխանը կը զրժի իւր խօսքը , միթէ՞ նա կը մոսանայ իւր առւած խոստամունքը : Զէ , նա ուր որ է կ'իրեւայ , որովհետեւ նրա սիրուն էլ կապուած է մեր Գոհարիկի հետ . . . Բայց այս ի՞նչ եմ ահսնում , Լուսիկ , նայիր ճանապարհի ուղղութեամբ , կարծես փոշու անգեր են բարձրանում , խօսքը յանկարծ փոխեց գարբեն Դեւոնդը եւ ձևոքը ճակատին դնելով ու չաղրութեամբ սկսեց գէպի փոշու ամպը նայիլ :

— Այս , հայրիկ , կարծես մի խումբ ձիաւորներ են գալիս , պատասխանեց Լուսիկը եւ նրա սիրաը կարծես կանգ առաւ ուրախութիւնից : Նա այդ կողմից Հարպիկ իշխանին եւ իւր գիժ Ստեփանիկին էր սպասում :

— Անպատճառ Հարպիկ իշխանն է , ասաց Ղեւոնդը :

— Զեմ կարծում , հայրիկ , Հարպիկ իշխանը չէ սիրում մի խումբ ձիաւորներով շրջել : Նա միայն Ստեփանիկի հետ է շրջում , այն ինչ այս խումբը մեծ է : Չե՞ս տեսնում , հայրիկ , ինչպէս փայլում են զէնքերը արևի ճառաղայթների տակ , ով որ է նշանաւոր իշխաններից մէկն է լինելու , ասաց յօւսահատ ձայնով Լուսիկը :

— Հա՛ , հասկանում եմ , մեր թագաւորութեան խնամակալ Վեստ Սարգիսը կը լինի : Օ՛ , եթէ նա է , մենք շուտով պիտի հեռանանք դրոներից : Նո չեմ ցանկանում նրա երեսը տեսնել :

Մինչդեռ հայր ու աղջիկ խօսում էին , ձիաւոր խումբը մօտեցաւ նրանց եւ սրարշաւ անցաւ նրանց առաջից դէպի Անի քաղաքը : Հայր հւ աղջիկ զարմացած դեռ նայում էին նրանց ետեւից : Այդ խումբը բաղկացած էր մօս հարիւր ձիաւորներից եւ մի քանի իշխաններից , որոնց առաջ զնում էր մի յոյն իշխան :

— Պատգամաւոր Հոռոմներից . . . Այս ի՞նչ բան է , ասաց Ղեւոնդը :

— Այո , յոյն իշխան էր առաջին ձիաւորը , բայց ինչ բան ունի նա մեր երկրում :

— Անշուշտ մի նոր վիշտ , մի նոր տառապանք է բերում հայերին համար , թէ չէ Հոռոմոց թագաւորը օգուտի համար մեզ մօտ պատգամաւոր չի ուղարկի . երեւի մի փորացաւ ունի :

— Բայց տեսա՞ր , հայրիկ , ինչ գոռոզ կերպարանք ունէր . նա կարծես մեր Հայաստանի աէրը լինէր այնպէս էր իրեն պահում . չէ՞ որ մեր թագաւորներն էլ այդպէս գոռոզ կերպարանք չունեն , ինչպէս այդ յոյն իշխանը :

— Է՛ս , աղջիկս , հիմա գրանց գոռոզանալու ժամանակն է քանի որ մենք թագաւոր չունենք , այ երբ Գագիկ իշխանը թագաւոր կ'օծուի , այն ժամանակ դրանք չեն համարձակուի այդպէս գոռոզ դիրք բոնել :

— Իսկ Գագիկը ո՞ւր է , հայրիկ , ի՞նչու նրան չեն օծում թագաւոր :

— Նա գեռ փոքր է , աղջիկս , հազիւ 15 տարեկան եւ անպիտան վեստ Սարգսի ձեռքից ծածկուած : Այ , թող մի փոքր նրա թեւերը ամրանան , այն ժամանակ նա յոյց կը առայ Վեստ Սարգսին թէ ինքը ինչ տեսակ արծուի կորիւն է :

— Լաւ , ի՞նչու Վեստ Սարգիսը թշնամութիւն է անում Գագիկին :

— Ի՞նչու — նրա համար որ գաճը ինքը ժառանգի եւ ոչ թէ Գագիկը Հարցրու « Խենթին »: ասս ինչեր կը պատմի Վեստ Սարգսի կեանքից : Նա իւր փառասիրութեան համար ամեն ինչ կը զոհի եւ ես կարծում եմ , որ այս յոյն իշխանին էլ նա է հրաւիրել , ո՞վ գիտէ ինչ սատանայութիւններ նիւթելու համար :

— Իսկ Հարպիկ իշխանը ո՞ւմ կողմն է . միթէ՞ նա կը պաշտպանի Վեստ Սարգսին . եթէ հարկը ստիպի :

— Եթէ հարկը ստիպի' . . . եթէ հարկը ստիպի նա Վեստ Սարգսի արիւնը կը խմիր , ինչպէս եւ Վահրամը , բայց ինչ կանես որ Վեստ Սարգսիս ներկայիս ուժեղ է եւ թագաւորութեան բոլոր գանձը իւր ձեռքին է : Այդ է պատճառը , որ Վահրամեանք հեռուից մրմռում են , բայց դեռ ոչինչ չեն կարողանում անել նրան :

— Աստուած վերջը բարի անէ , հայրիկ , լաւ չէ . որ մեր իշխան՝ ները փոխանուկ ձեռք ձեռքի տալու իրար դէմ են գնում :

— Հը՛մ , հենց այդ է որ մեր առունը քանդում է է' . . . Այդ անմիաբանութիւնը որ չլինէր , ոս մեր ազգի նման ուժեղ եւ զօրաւոր ազգ մէկն էլ չէր լինի : Բայց ինչ կանես , որ արտաքին թշնամին հենց այդ բանից է բռնու մ եւ մեր աշքը հանում թէ չէ ինչպէս կը համարձակուէր կամ յոյնը կամ արարը մեր աշխարհը աւերել եւ ոտնատակ տալ :

— Բայց Վեստ Սարգիսը ի՞նչ կօգտուի , հայրիկ , իւր անմիաբանութիւնից :

— Այդ արդէն մեր բանը չէ : Կ'օգտուի թէ չի օգտուի չզիտիմ , բայց որ Հայաստանը տակն ու վրայ կը լինի — այդ լաւ գիտեմ : Է՛ , աղջիկս , կը մեծանաս դեռ շատ բան կիմանաս : Այժմ գնա՛ , դու քո ապուրը պատրաստիր , ո՞վ գիտէ գուցէ հենց հիմա երեւայ քո Ստեփանիկը եւ իւր գժութիւնները բանեցնէ ու քեզանից շուտով ապուր ուզէ : Զէ՞ որ նա քո եփած ապուրը սիրում է :

Լուսիկը խոր ախ քաշեց և հեռացաւ , այն ինչ դարբին Ղեւոնդը մտազրաղ սկսեց խուզի առաջը շրջել : Թէ ի՞նչ էր մտածում — յայտնի չէր : Երեւում էր միայն , որ նրա սրտի մէջ մի ինչ որ ներքին կոիւ կար , մի ինչ որ անյայտ որդ բոյն էր դրել նրա սրտի մէջ եւ անողորմաբար կըրծում էր նրա սիրտը եւ տակն ու վրայ անում նրա հոգւոյ խաղաղութիւնը . . . :

(Տարումակելի)

ԲԱԳՐԱՏ ԱՅՎԱԶԵԱՆՑ